Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3974

281·6
U-55

2010

281.6
U-55
N.211

Интересный
Изборник

РЕДАКЦІЯ ГАЗЕТЫ „МИРЪ"
ТИФЛИСЪ

281.6
U-55

1886

W. 211
280
909-ՄԵ
281.6
Մ-55

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԱՍԵԱՅ ՈՐԴԻՈՅՆ, ԵՂԻՇԷԻ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՔՆԱՐԸ.

Ի Հանդիսի Օծման Նորընտիր Հայրապետի և Ծայրագոյն Պատրիարքի Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Տեառն և Տեառն ՄԱԿԱՐԱՅ Ա.

ի 10-ն Նոյեմբերի, 1885 ամի, ի Ս. Էջմիածին:

Գրեցաւ ի 5 Նոյեմ. նոյն (1885) ամի ի Տփխիս.

Սուրբ Էջմիածինը, այն է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Մեծ Դշխոյն, իմ գերերջանիկ և պանծալի Մայրը՝ որոյ անարատ արգանդից, Հոգևոր երկամբք ծնուած եմք Հայերս, այսօր՝ (որ ներկայ 1885 թուականի Նոյեմբերի 10 երրորդ օրն է), Իւր նորընտիր Փեսային — Տ. Տ. ՄԱԿԱՐ Ա. Ծայրագոյն Պատրիարքի և ամենայն Հայոց Կաթուղիկոսի Օծման Հանդէսն է տօնում, Իւր Միաբանական Սուրբ Հարց, Հայկական ընդհանուր ժողովրդեան, և բոլոր Եկեղեցեաց Ուխտի հետ:

Հայոց Գրիգորին, Սուրբ Լուսաւորչի այս Վեհ Սրբավայրը՝ որ Հայոց պարծանաց միակ Գահն է՝ արդէն երկու տարի և ինն ամսից իվեր՝ զրկուած լինելով իւր նախկին Գահակալից՝ ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Գէորգ Դ. քաջարթուն Հայրապետից, կարտասուէր և կոգայր իւր անգին կորուստը՝ ի տեսիլ աշխարհի, հրեշտակաց և մարդկան. արկանելով նաև բոլոր Հայ ազգը և Հայ Եկեղեցին, և Դպրոցներն և Ճեմարանք, և այլ և այլ հաստատութիւնքն՝ սրտակէզ տրտմութեան, վշտերի, և տեսակ տեսակ մտաւորական և բարոյական աղէտների մէջ։

Ո՞հ, այն օրերը, այն տրտասուալից և տիրագին ժամերը՝ արդարև, Միածնաէջ Աթոռոյն,—Արարատեան Մայր Եկեղեցւոյ հոգեկան ներքին վիշտը, և սրտին կսկիծը և հառաչանքը և տեսարանը՝ շատ և շատ ցաւալի և քստմնելի էր նաև ամէն մի մտածող և զգայուն Հայի համար, ճշմարիտ և բարեսէր Հայի սիրտ ունեցողների համար։

Արդեօ՞ք, այս թախծալի և արտասուելի ժամանակներին՝ ընդհանուր Հայ ազգի հետ ի միասին՝ մենք ևս ինչ էինք տեսնում և շօշափում.—Աստուածայարկ Սուրբ տաճարի լուսեղէն Խորանին երեսը՝ մի սեռ Վարագոյր. կարծում էիր, թէ՝ աշխարհապարփակ տիեզերակալ մուրթը (թոհ և բոհ), տիրել է Մայր Աթոռին. որով ցոյց կ՚տար, թէ՝ ամէն Կոյսերի Իսկուհին, Լուսածին Ծնող Առաքելական ուղղափառ Սուրբ Եկեղեցին՝ զրկուել է իւր բազմահանճար և բազմարգիւն Սուրբ Փեսայից. և իւր ողբաձայն պղնձի,—Զանգակի՝ խորհրդական լեզուով ևս՝ սփռում էր իւր անմահ Աթոռակալի անակնկալ մահուան գոյժը՝ բոլոր աշխարհի մէջ, խուզ հրաւիրելով և Հայկական ժողովուրդը. Որոյ՝ (Լ. Գահի) տրտմութեան և թշուառութեան կայծակները՝ թափվում էին ամէնաբարձր դասակարգերից սկսած՝ մինչև անհաց, անտէր, անտուն, և աննշան լետին աղքատին, ստրկին, Հովուին և Մշակին, և Գիւղացու անպաճոյճ խիւղի մէջ։ Տխրագին ձայնով՝ Իւր (Էջմիածնի) հետ՝ի միասին՝ լալիս էին և Հայկա-

կան Եկեղեցեաց և Մենաստանաց և Վանօրէից բոլոր զանգակներն՝ ձայն տալով ամէնքիս, թէ՝ «թռեա՛ւ, սլացա՛ւ Ձեր քաջ Հայրապետն, ո՛վ Հայեր. այսուհետև տեսնում էք Նորան, ո՞հ, անլոյս, անարև, մութ պաստառի քօղով՝ անգութ մահուան օրօրոցում,—Դագաղում, չորս փայտի մէջ. որբափայլ Գլուխը և պայծառ Ճակատը՝ տխրատեսիլ Դագաղի թաւիշեայ սեւ բարձի վերայ հանգչեցուցած. այն Գլուխը՝ որ դեռ ևս պիտի գործէր իւր նազելի Հայ ազգի ներկայ և ապագայ սերունդների լուսաւորութեան, կրթութեան, բարոյականութեան և յառաջադիմութեան համար։» Թերևս, բոլոր Հայկազունք՝ իւրեանց սգալից աչքերը դէպի այս Հոգեւոր Աթոռը դարձուցած՝ փնտռում էին իւրեանց Հովիւը՝ և լալիս էին անդադար, ազգի ազգի ողբերով, ինչպէս երբեմն Հինն Իսրայէլ՝ տխուր և սգաւոր, ձեռքն ի ծնօտի՝ Բաբելացւոց գետերի ափերում նստած՝ նոյն իսկ օտար, անծանօթ երկրի գետերի ալիքներին էր խառնում իւր արտասուքը, և ողբերն ու ցաւերը. բայց և այսպէս՝ Հայոց Աշխարհի տարաբաղդ որդիքը՝ առաւել զգայուն և վառ երևակայութեամբ և անսահման սգով՝ հառաչում էին շատ աղէտալի.—» Ո՞ւր է մեր Հովիւը, մեր լուսատու Արփին, մեր Խնամատարը, ո՞հ, ո՞ւր գնաց նա...»։ Ծաղկանց Թուղուհի Վարդն, և Շուշան, Փոյր և Եղբայր,—Սգալին երկսեռ Դպրոցներն ևս՝ Ախուրեան գետի պղտոր և արիւնոտ ալեաց մէջ ընկած՝ սև ազգեստ, տխրագէմ, աղի արցունքներն կուրծքերին վերայ՝ ողբով, սգով տրորված, կեանք, խնդութիւն և ուրախութիւն կորուցած՝ իւրեանց Պետն էին որոնում, և հարցանում. կարծում էին, թէ՝ ալիքներն զայն տարին. —» Աւետաբեր հողմիկ, և ալիք հայրենեաց՝ մի՞ թէ՝ ունի՞ք մի լուր, և կամ դուք ևս՞ ողբայք և սգայք զԴիտապետն Հայկազանց.» ափսո՞ս, շատ ափսոս. և ալիք և հողմիկ՝ կարեվէր, ողբանուէր, անդէն և եթ՝ հեծեծեցին և լացին.—» Նա՝ ի դագաղ,... ի դագաղ, մի՞ այլ ևս փնտռէք, ո՞վ Հայք...» կանչեցին։ Աւա՜ղ մեզ, և ալիք և վտակներ, իմ

Հայրենի գետակն Հրազդան, Երասխ և Մասիս, Այրարատ և Արագած, ու Անին ևս՝ իւր անթագ, անպսակ, և սգապատ Գլուխը՝ առաւել ևս ի հոգ խոնարհեցուցած՝ սգում էր անտանելի, երբ տեսնում էր՝ այո՛,— Իւր աննկուն Հայրապետի Իշխանական Գաւազանը՝ վայր ընկած ի սնար. Գահը՝ նուիրական վեհ Գահը, որ սուրբ Թադդէի և Բարդուղիմեայ Մեծ Առաքեալների ձեռօք է հաստատուած, իբր մաքուր Մարմին Յիսուսի գըլխին՝ Աւետարանի ուղիղ սկզբանց և ուղղափառ Հաւատոյ Դաւանութեան հիման վերայ՝ ո՛հ, սեաւ թաւիշով և մութ քողով էր ծածկուած.—գեղապանծ Սուրբ Թադը, որ արևի նման շողշողում էր՝ սգաթոյր շըղարշով քողարկուած. Նափորտապատն և Վակաս, Պազպանք և Շուրջառք՝ անշուք, անծիծաղ՝ ընդ տխրական մութ քողով ծալուած, ցան և ցիր ընկած. անուշահոտ խնկոց Սուրբ Սեղաններն, փրկարար Խաչերն, Աւետարաններն և Կտակարանք, Շնորհաբաշխ Սկիհներն, բուրվառք և ցնծղայք, Նահապետաց և Մարտիրոսաց՝ Կուսանաց և Ճգնաւորաց՝ Հայրապետաց և Առաքելոց՝ խնկելի, պաշտելի և երկրպագելի նշխարներին վերայ՝ սեաւ պատանք ձգած: Եւ ահա՛ այստեղ, այս աղէտալի ժամին՝ կտեսնէիր հոգեկան աչօք՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաքելաշնորհ Սուրբ Հարց՝ սքանչելատեսիլ ժողովը, մի այնպիսի Աստուածատեսիլ հոգեխառնութեամբ, որին ընդարձակ և ճիշդ նկարագրութիւնը՝ անզօր է իմ գրիչը այստեղ արձանագրելու.—ո՛վ հրաշալեացս, Երանելեաց հոգիք՝ կարծես, նոյն իսկ կենդանի սուրբ Հարց հետ՝ Միածնաէջ Տան մեծախորհուրդ սուրբ Սեղանի, Աստուածահաստատ երկնաշէն Խորանի սրբազնացեալ Բեմի վերայ՝ դէմ առ դէմ շուրջառներն առած՝ կանգնած էին հանգուցեալ Հայրապետի Դագաղին չորս բոլորը.—Պալհաւեան սուրբ ծերունին—Մեծն Ներսէս՝ իւր հրեշտակատեսիլ դեմօք և հոգեշունչ լեզուով. Գիւտ, և սուրբն Մեսրովբ, Հայկական գրերը կուրծքին վրայ՝ երկնքի աստղերից աւելի պայծառ և շողշողուն և փառաւոր.—Ներսէս չորրորդ, Երանաշնորհն Գրիգորիոս՝ իւր

Աստուածային Քնարն, սուրբ Նարեկը իձեռին բռնած. Մանդակունին և Յովհան, Խորենացին Մովսէս՝ իւր ճարտասան, պատմաբան լեզուով. Դաւիթ անյաղթն, Եղիշէն, Մամբրէն, Եզնիկ և Կորիւն, Գոշ Մխիթար, և Ղազար. Գրիգոր Արշարունին և Խոսրով. Գրիգոր մագիստրոս, Գրիգոր Լաստիվերգեցին, մի այլ համազ գեստով և պայծառութեամբ. Սարգիս Շնորհալին, Ներսէս Լամբրոնացին. Սուրբ Ղևոնդ երէց, և Լուսաւորիչն Հայոց Սուրբն Գրիգորիոս. որոյ փառաւոր և անմահ անուան հետ՝ ինչպէս կապուած է մեր Եկեղեցին և Պատմութիւնը և Հայ ազգը, նոյնպէս և այն ամէն, վերոյգրեալ մեր երանելի Նախնիքը և Իւր Յաջորդներն և ծառանդներն ևս՝ անմարմին հոգւով միացած իւր հետ՝ ինչպէս իւրեանց մարմնաւոր արմատին հետ՝ հրեշտակալին, հրեղէն երգերով, իրենց Նախորդ Մեծ Գահակալին, Հայկական Եկեղեցւոց նախկին Պետին և մեր Պաշտպանին, ներբողականներ հիւսելով՝ կը հրաւիրէին, որ կնքէ վաղամեռիկ Հայրապետի սրբազան մարմինը՝ Իւր (հանգուցեալի) Հայրենի Շիրմի մէջ. և կարծես, անդէն և եթ՝ կը նորոգուէր, և կը մարմնանայր Եկեղեցւոյ Պերճախօս Ձայնը,—կ՚ատենաբանէր, և կ՚աղօթէր Լուսաւորիչը, հայցելով Յիսուսից՝ որ զերջանիկ Հայրապետն զՏէր Դէորգ Դ. Երկնայնոց կարգը դասէ, երկնային Խորանաց մէջ:

Իսկ այսօր, գոհացողական և ուրախական փառատրութիւն տիեզերաց Ստեղծողին, որ երկրի մէջ նկարուած՝ Երկնային սուրբ Խորանը, Առաքելական Մայր Եկեղեցին Սուրբ Էջմիածնի, Դշխուհեաց Դշխոյն, Իսկուհեաց Իսկուհին՝ վարառնելով Իւր այրիութեան տրտմալի, սգալի քողը՝ հրաւէր է կարդում բոլոր աշխարհին և ընդհանուր Հայ ազգին, թէ՝ — ահա, իմ նորընտիր Փեսայն, զՏէր Մակար Հայրապետ՝ բազմած է իւր վե՛հ Գահի վերայ. որի առաջ՝ ծունր են իջանում Իւր Ուխտի սուրբ Հարք և Հաւատոյ Մանկունք. և Իւր Կրօնական ազգարար փողով՝—զանգակի քաղցր և ուրախ հնչմամբ ևս՝ այս պայծառ և նուիրական օրը՝ կաւետէ՝ ոչ միայն Հայոց ընհանուր Եկեղեցիներին և ժողովրդեան, այլ

և Մենաստանաց և Վանորէից, և Դպրոցներին և Ճեմարան-
ներին, և այն ամէն Ազգային Կրօնական և Բարոյական Հաստա-
տութիւններին, որոնք գտնվում են զանազան Տէրութեանց
իշխանութեան ներքոյ։

Ես և՝ Հայկական ազգի ընդհանրութեան հետ, նորա՝
այս Կրօնական և հոգեկան ընդհանուր ուրախութեան և ապա-
հով Դրութեան մէջէն, իմ,—» մի կաթիլ արտասուքը «
այստեղ արձանագրելուց յետոյ՝ առանձին թերթի վերայ, չեմ
կարող անտարբեր և անզգայ մնալ՝ իբրև կոճղ անապատի,
և չգրել մեր նորաօծ Քահանայապետի ընտրութեան և Անձ-
նաւորութեան հարցի վերաբերմամբ՝ այլ և ս մի քանի խօսք։

Նորապսակ Վեհափառի ընտրութիւնը՝ միշտ պէտք է
մնայ Ազգային և Եկեղեցական մեզ ժամանակակից Պատմու-
թեանց մէջ՝ իբրև մի չքնաղ նախագաղափար Ռուսիոյ
Օգոստափառ Կայսեր Աղեքսանդր Գ ի, Բարձրագոյն Խնամա-
կալութեան, Իմաստուն Տեսչութեան, և Մարդասիրութեան.
ուստի, և աներկբայելի է՝ ճշմարիտ է, որ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱ.
ԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ կարեկցութիւնը, և խնամքը և սէրը՝ շատ
մեծ և անսահման է իւր հպատակ Հայ ազգի վերայ. որ և
լաւ իմանալով մեր Հայրապետական Գահի նշանակութիւնը՝
ամէնողորմածաբար բարեհաճեցաւ՝ հաստատել՝ այդ Կրօնա-
կան վեհ Գահի արժանաւոր Փոխանորդ՝ զՏէր ՄԱԿԱՐ Ա.
Վեհափառն. որի ամենահաւատարիմ ծառայութիւնքն առաջի
Օգոստափառ Պետութեանց Ռուսիոյ և Հայաստանեաց Եկե-
ղեցւոյ՝ իվաղ ժամանակաց հետէ, յայտնի էին Մեծ Արքային։

Գալով Նորին Վեհափառութեան անձնական կատարելու-
թեանց վերայ՝ այսպէս կենթադրեմ, և կը հաստատեմ, որ Նա՝
Հայաստանի Եկեղեցւոյ այժմեան Անկիւնաքարերից և Գո-
հարներից մինն է. և միանգամայն, աննկուն Պաշտպան
Մայր Աթոռին՝ և Ազգի շահերին և իրաւունքներին. և
մեր նախնի Սուրբ Հարց Օրինաց Ուխտին և Կանոնաց սահ-
մաններին և՝ քաջարթուն հրսկող և վերադիտող. լայնա-
խորհուրդ, շրջահայեաց, մեծիմաստ, հեռատես, երկայնամիտ,

ներող, գնահատող, ճանաչող և վարձատրող, անոխակալ և
անփառասէր և ուսումնասէր. նա մանաւանդ՝ վեհանձն և
ծանրակշիռ, որոնք Իւր Քաղաքականութեան և Իշխանական
վարչութեան՝ գլխաւոր յատկանիշներն են։ Այսպէս ուրեմն,
ով իմ սիրելի և անմոռանալի Հայեր, Հայ մատենագիրներ, աշ-
խոյժոգի երիտասարդներ, Հայ մամուլներ, Խմբագրապետներ և
Բանաստեղծներ, Հրապարակախօսներ և Լեզուագէտներ, Հայ
ուսուցիչներ, ուսուցչուհիներ, և Ուսումնարանական և
Ճեմարանական Տեսուչներ, Հայ հոգևորականներ, Հարուստներ
և Իշխանաւորներ, ահաւասիկ՝ մեք ամէնքս, աչքի առաջև ու-
նենալուց յետոյ վերոյգրեալ հանգամանքներն և բոլոր
ցոյցերն՝ պէտքէ վերանորոգենք մեր սրտի և հոգւոյ մէջ,
այն փայլուն յոյսերն՝ որ երբեմն, շողշողում էին մեր դիմաց
ազգի ազգի երևոյթներով, Կաթուղիկոսական ընտրելեաց հար-
ցերի մէջ՝ Ազգի ներկայ և ապագայ բարօրութեան, լուսաւորու-
թեան, կրթութեան և յառաջադիմութեան մասին. աներկմիտ լի
նելով, որ մեր Նորընտիր Վեհափառ Հայրապետը՝ իւր Ազգայոյս
ճառագայթներով՝ ամէն խաւար, ամէն մութ հալածելուց յետոյ՝
ինչպէս Սուրբ Էջմիածնի հորիզոնից (եթէ գտնվում է), նոյն-
պէս և Իւր անընդմիջական Իշխանութեան ներքոյ գտնուած
Հայկական բոլոր Եկեղեցիներից և Դպրոցներից, Ճեմարան-
ներից և Վանքերից, և ուրիշ ո՛ր և իցէ Բարոյական հաս-
տատութիւններից, այնուհետև՝ չպիտի խնայէ ո՛չ մի միջոց
Ազգային Լուսաւորութեան գործի ասպարիզում՝ Ազգային
Դաստիարակութեան, կրթութեան, Բարոյականութեան և
յառաջգնացութեան համար. և իբրև մի Աստուածային Առ-
իւծ, Իւր Հերոսական ուսերու վերայ առած Հայ ժողովուրդը,
և Նորա՝ այսինքն ժողովրդեան, փառքը, պատիւը և սէրն ևս՝
իբրու Մեսրովբեան անջինջ նշանագրեր, նոր ոսկետառեր, Իւր
սրբափայլ կուրծքին վերայ դրոշմած՝ հսկայի քայլերով պիտի
յառաջ գնայ՝ Եւրոպական լուսաւորութեան, կրթութեան,
հիմնաւոր դաստիարակութեան, և այլ և այլ Քաղաքագի-
տական և կենցաղօգուտ զարգացմանց հասանել՝ Նախնական

գեղեցիկ բարեպաշտութեամբ, որն որ մեր Պապերուն միակ պարծանք էր՝ և անգին ժառանգութիւնը։

Եւ ահա, այս հաստատուն յոյսն և փափագն էր՝ որ և իմ սիրտն ու գրիչը շարժեց՝ Ազգին ներկայ Պահանջն և Դրութիւնը գիտնալով՝ առ այժմս այսքան միայն գրել, իմ Հայկական Քնարին թելերովը. որ և ի վերջոյ՝ մաղթելով Փրկչից, որ այսօր՝ իւր Տիրական Աթոռում բազմող նորապսակ Քահանայապետը և Արժանընտիր Գահակալն Սուրբ Կաթուղիկէ Էջմիածնի՝ մեզ լուսատու շնորհէ, և միշտ զօրաւոր պահէ Իւր Իշխանական Գերագահ Տեսչութեան մէջ՝ ի փառս Ազգի և Եկեղեցւոյ՝ խոնարհիմ ի համբոյր Աստուածարեալ Աջոյ Նորին Վեհափառութեան.

Եւ կամ և մնամ, Ազգի և Եկեղեցւոյ միշտ անձնանուէր՝

Եղիշէ վարժապետ Մեծատունեան։

ԿԱԹԻԼ ՄԻ ԱՐՏԱՍՈՒՔ.

Ի փոխումն յաստեացս,

ՏԷՐ ԳԷՈՐԳ Դ.

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ։

Ցոյժ սգաւոր հնչէ ահա, զիւր Զանգակ՝
Էջմիածին, ծածկեալ ի քող սևորակ.—
«Այրիացայ, այրի մնամ, մինչև ցերբ...
Հայաստանեալքս չզասցեն, ասա, յերբ...։
Մասիս։ Գրգուռ, և Արագած, և Անի,
Տխրատեսիլ արտասուեսցեն, ահ, քանի.
Եւ տխրամածն այս Վեհ Աթոռ Գրիգորի՝
Սևասքողեալ, քանի մնայ որբ, այրի.
Սեղանք խնկոց՝ և Վարագոյր Տաճարիս,
Սաղմոսարանք և Շարականք Սուրբ Բեմիս,
Բազպանք, շուրջառք, Խաչք և Սկիհք Շնորհաց,
Եւ Վակասին աչք ի տրոր՝ կան ի լաց։
Մովսիսական Յուպդ և Խոյրն սգաթոյր,
Առ սնարաւդ այդ՝ ցերբ մնան միայնոյր.
Ո՛վ՝ Տէր Գէորգ, Հովիւդ Քաջ և Արի,

Անմահացա՛ր,... ՚ւ անմահացո՛ւս յաշխարհի.
Զինչ Նոր Մովսէս երեւեալ մեզ՝ արդա՛րև,
Նոր իմն Յեսու, Նոր Մեսրովպ, Սահակ Պարթեւ.
Կամ՝ Նոր Ներսէս, և կամ՝ Յովսէփ ցանկալի,—
Բարոյական կերակրիչ Քո հօտի:
Ի յԱրձանի դրոշմեցաւ Քո անուն,
Ո՛չ յոսկեղէն, այլ՝ ի մեր սիրտ զգայուն.
Հետք Քոց վայրաց՝ այլ ո՛չ երբէք ջնջեսցին,
Քոց շնորհաց արգասիք միշտ փայլեսցին:
Գիտեմ՝ ցաւիս, զի Ճեմարանդ փոյթ թողեր,...
Զայն որ յանուն քո, «Գէորգեան» կոչեցեր.
Զայն՝ որ քրտամբք քո և Ազգիդ՝ կառուցեր,
Ընդ հովանեաւ Մայր Աթոռոյդ՝ անվեհեր.
Մ՚ի՛ մտածեր, խաղա՛ղ ննջեա ի Շիրմիդ.
Նուիրական է Դա՝ Աւանդ սուրբ Ուխտիդ.
Եւ թէ՝ ցորչափ կացցէ մնասցէ Հայոց Տուն,
Դարուց ի դարս՝ միշտ պանծասցի Քո անուն.
Նորոգեսցի որպէս փիւնիկ՝ ամէն օր,
Յերգս արկեալ զերջանիկ Հայրդ՝ օր իյօր:
Դու՝ ո՛չ միայն զայս Ճեմարան և զԱթոռ՝
Հաներ ի լոյս, այլ զԴպրոցս բոլոր՝
Ի լոյս մտաց, ի գիտութեան՝ Դու աճեր.
Քոյր և Եղբայր՝ ի խաւարէ փրկեցեր:
Զտպարանս, և «զԱրարատ» ամսագիր՝
Ծաղկեցուցեր, իմաստութեամբդ երկնածիր.
Ծրագունք վառին, սփոփական լուսարփիք,
Շուրջ զՇիրմաւդ՝ նոքա Հայոց են մանկտիք.
Նոցա հառաչք՝ չերթան ի բաց՝ ի Շիրմէդ,
Նոցա արցունք՝ ի սուրբ ոսկերս Քո յաւէտ:
Եւ ցորչափ քիրտն հեղեր ի սէր քո Ազգի՝
Մարգարտազարդ Թագ ձևացաւ պանծալի.
Եւ ի Թագին Քում հովանի՝ փթթեսցին,
Վարդն և Շուշան, Արմաւենին, Ձիթենին:

Մ՚ի՛ վրդովիր, ծաղկունք Քո՛ ո՛չ թարշամին,
Օրհնեա՛լ է Հողն՝ յոր սերմն արկեր Դու՛ անգին.
Զի չև Աչք, Ձեռն աւարտու չի՛ք և աստ,...
Ի Միութիւն Սիրոյ՝ և Մեք կամք զգաստ,....:
Գայլք և Վագերք, Արջք և Առիւծք, Օձ, Կարիճք,
Մ՚ի՛ իշխեսցեն հպիլ ի Սա, և Ուտիճք:
Համբո՛յր Շիրմիդ. հազա՛ր համբոյր ո՛վ Հայր մեր,
Հայցեմք՝ ընկա՛լ զայս արտասուս վշտաբեր,
Ողբա՛մք զարև կենաց Վ.եհիդ՝ շատ ողբամք,
Զրկեալք ի Քէն, ցորչափ ՚ւ ի Քէն ամբաժ կամք.
Հիւծեալ մաշին Մանկունք Նորոյ Սիօնի,
Յերբ լուեցեն այլ Ես ի ձայն Զանգակի,
Թէ՝—»Աշա՛, գայ Փեսայն, ելէք յԱտենի....»—
....այրե՛ մնամ, լա՛մ, և սգամ թախծալի...

ԵՂԻՇԷ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

յԱխալցխայ. ի 11-ն Ապրիլի,
1884 ամի:

Տպագրեցաւ ի5-ն Յունվարի, 1886 ամի ի Տփխիս:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Доз. Цензурою Тиф. 17 Декабря 1885 г.

Тип. М. Вартанянца, Троиц. пер., д. № 11.

3974

3852